«Երկարացրու ամառը» Գովազդային վիճակախաղի կանոններ

Նախաձեռնության անվանումը

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (այսուհետ՝«Կազմակերպիչ») նոր հաճախորդներ ներգրավելու նպատակով անցկացնում է գովազդային վիճակախաղ, որի շրջանակներում «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի բջջային կապի ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդները՝ կատարելով սույն Կանոնների պայմանները, հնարավորություն են ստանում շահել մրցանակ՝ ուղևորություն: Նախաձեռնության խթանումը կոչվում է «Երկարացրու ամառը» գովազդային վիճակախաղ, այսուհետև՝ գովազդային վիճակախաղ կամ խաղարկություն:

1. **Գովազդային վիճակախաղի անցկացման ձևը և անցկացման տարածքը**

1.1. Գովազդային վիճակախաղի մասնակցության հնարավորություն են ստանում ՀՀ տարածքում բնակվող՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի բջջային կապի ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդները, որոնք 2024թ. օգոստոսի 9-ի ժ. 00:00-ից մինչև 2024թ. սեպտեմբերի 30-ի 23:59 ներառյալ կկատարեն հետևյալ պայմանները (այսուհետ՝ Գովազդային վիճակախաղին մասնակցելու պայմաններ կամ Կանոնների պայմանները)՝

1.1.1. Մասնակիցը պարտադիր պետք է գնի «Երկարացրու ամառը» պրոմոյի շրջանակներում «Honor 200 Lite» մոդելի հեռախոս և ակտիվացնի նույն պրոմոյի շրջանակներում տրամադրվող SIM քարտը՝ Team Tok կանխավճարային սակագնային փաթեթով:

1.1.2. Խաղարկությանը հնարավոր է մասնակցել միայն «Երկարացրու ամառը» պրոմոյի շրջանակներում հեռախոսի հետ տրամադրված SIM քարտի հեռախոսահամարի միջոցով:

1.1.3. Մասնակիցը մինչև պրոմոյի ավարտը պետք է հանդիսանա «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի բջջային կապի բաժանորդ և հեռախոսահամարը պետք է լինի նույն անձի անունով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Մասնակիցների կողմից խարդախությունների դեպքերի բացահայտման դեպքում Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում այդպիսի մասնակիցների նկատմամբ իրականացնել համապատասխան միջոցներ, այդ թվում նաև՝ զրկել նրանց Գովազդային վիճակախաղին հետագա մասնակցելու իրավունքից:

2. **Գովազդային վիճակախաղի Կազմակերպչի անվանումը**

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, Ազատության պողոտա 24/1, 0014 Երևան, Հայաստանի Հանրապետություն:

3. **Գովազդային վիճակախաղի անցկացման ժամկետը**

3.1. Գովազդային վիճակախաղը կանցկացվի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով մեկ՝ 2024թ.օգոստոսի 9-ի ժ. 00:00-ից մինչև 2024թ. սեպտեմբերի 30-ի 23:59 ներառյալ:
Հոկտեմբերի 1-ին ժամը 00:00-ին «Երկարացրու ամառը» պրոմոյի շրջանակներում վաճառքը դադարեցվում է:

4. **Գովազդային վիճակախաղի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները**

4.1. Գովազդային վիճակախաղի մասնակից կարող են դառնալ ֆիզիկական անձինք, որոնք կատարել են սույն Կանոնների պայմանները:

4.2. Գովազդային վիճակախաղին չեն կարող մասնակցել հետևյալ անձինք՝

4.2.1. «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ աշխատակիցները, աշխատակիցների ընտանիքների անդամները և Գովազդային վիճակախաղը կազմակերպող և իրականացնող բոլոր անձինք

4.2.2. Իրավաբանական անձինք

4.2.3. 18 տարին չլրացած անձինք

4.2.4. Գովազդային վիճակախաղի անցկացման ժամանակ չմասնակցած կամ սույն Կանոններով սահմանված պայմանները չկատարած անձինք:

4.3. Գովազդային վիճակախաղի գործողության ողջ ժամկետի ընթացքում Գովազդային վիճակախաղի մասնակիցները պարտավոր են հետևել Գովազդային վիճակախաղին մասնակցելու կանոններին, ինչպես նաև կատարել բոլոր գործողությունները՝ կապված մրցանակների տրամադրման և ստացման հետ:

4.4. Գովազդային վիճակախաղի մասնակիցների համար Գովազդային վիճակախաղի Կանոնների մասին ամբողջ տեղեկատվությունը հրապարակված է www.telecomarmenia.am վեբ կայքում:

4.5. Գովազդային վիճակախաղի անցկացումը վաղաժամ դադարեցնելու դեպքում Կազմակերպիչը պարտավոր է www.telecomarmenia.am պաշտոնական աղբյուրում հրապարակել տեղեկություն Գովազդային վիճակախաղի անցկացման դադարեցման մասին կամ այլ եղանակով հրապարակայնորեն ծանուցել նման դադարեցման մասին:

4.6. Գովազդային վիճակախաղի Կազմակերպիչը պարտավոր է ավարտել Գովազդային վիճակախաղի անցկացումը, այդ թվում իրականացնել մրցանակների տրամադրումը և կատարել այլ անհրաժեշտ գործողություններ Գովազդային վիճակախաղի մասնակիցների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ Գովազդային վիճակախաղի դադարեցումը կամ ընդհատումը պայմանավորված է գործողություններով կամ իրադարձություններով, որոնք դուրս են Կազմակերպչի վերահսկողությունից:

4.7. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Գովազդային վիճակախաղի մասնակիցների՝ այդ թվում նաև հաղթող ճանաչված անձանց առջև, Կազմակերպչի կողմից իր պարտականությունները կատարելու վրա ուղղակիորեն ազդող և դրանց կատարումն անհնարին դարձնող ֆորս-մաժորային իրավիճակների առաջացման համար՝ ներառյալ, բայց չսահմանափակելով պատերազմներ, ահաբեկչական գործողություններ, ջրհեղեղներ, հրդեհներ, գործադուլներ, երկրաշարժեր կամ այլ բնական աղետներ, համաճարակներ, պետական մարմինների կարգադրումներ և այլ օբյեկտիվ պատճառներ, որոնք կախված չեն Կազմակերպչից:

4.8. Գովազդային վիճակախաղի Կազմակերպիչն իրավունք չունի Գովազդային վիճակախաղի մասնակիցների մասին տեղեկատվությունը տրամադրել երրորդ անձանց, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոններով նախատեսված դեպքերի:

4.9. Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում նամակագրության կամ այլ կոնտակտների մեջ չմտնել Գովազդային վիճակախաղի մասնակիցների հետ, բացի սույն Կանոններում նշված կամ ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան դեպքերից:

4.10. Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում մասնակցին զրկել մրցանակից, եթե առկա են ապացույցներ, որ տվյալ մասնակիցը խախտել է ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոններով սահմանված նորմերը: Նման դեպքերում Կազմակերպիչը մրցանակի հետ իր հայեցողությամբ վարվելու իրավունք է վերապահում:

5. Գովազդային վիճակախաղի մասնակցության և մրցանակների տրվելու կարգը, հաղթողների որոշման ալգորիթմը

5.1. Գովազդային վիճակախաղի մասնակցելու համար անհրաժեշտ է կատարել սույն Կանոնների պայմանները:

5.2. Գովազդային վիճակախաղի մասնակցնելու պայմանները կատարելուց անմիջապես հետո հաճախորդը դառնում է Գովազդային վիճակախաղի մասնակից՝ համաձայն սույն Կանոններով սահմանված կարգի:

5.3. Գովազդային վիճակախաղին մասնակցելը նշանակում է, որ մասնակիցը լիովին համաձայն է Գովազդային վիճակախաղի սույն Կանոնների հետ: Գովազդային վիճակախաղին մասնակցելով՝ մասնակիցը տալիս է Կազմակերպչին Գովազդային վիճակախաղին մասնակցելու համար անհրաժեշտ իր անձնական տվյալները Կազմակերպչի կողմից մշակելու, օգտագործելու, ինչպես նաև երրորդ անձանց (ներառյալ՝ այլ երկրներ) փոխանցելու համաձայնությունը:
Մասնակիցը հավաստում է, որ Կազմակերպչի կողմից ծանուցված է Մասնակցի անձնական տվյալները մշակելու Կազմակերպչի մտադրության, մշակման իրավական հիմքերի, նպատակի, ինչպես նաև «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ծանուցմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին:

5.4. Մասնակիցները համաձայնվում են տրամադրել Կազմակերպչին Գովազդային վիճակախաղի մասնակցելու և մրցանակը ստանալու համար անհրաժեշտ անձնական տվյալները:

5.5. Գովազդային վիճակախաղի մրցանակային ֆոնդ՝ 100-150 ուղևորություն դեպի Եգիպտոս:

5.5.1. Գովազդային վիճակախաղի մրցանակային ֆոնդը ձևավորվում է Գովազդային վիճակախաղի Կազմակերպչի սեփական միջոցների հաշվին և առանձին սահմանվում մինչ Գովազդային վիճակախաղի սկիզբը: Գովազդային վիճակախաղի մասնակիցը մասնակցելով կարող է ստանալ ստորև ներկայացված մրցանակներից մեկը:

Մրցանակի անվանումը - մեկ հոգու ուղևորություն դեպի Եգիպտոս**
Մրցանակների քանակը* - մինչև 150 (մեկ հարյուր հիսուն) հատ, մինիմալ քանակ՝ 100 հատ, մաքսիմալ քանակ՝ 150 հատ (կախված վաճառքի քանակից)

*Նշված է տրվող մրցանակների գումարային քանակը:

Ուղևորության պայմանները.
Ուղևորության ժամկետները՝ նոյեմբեր, 2024, (7 օրով):
Ներառված է՝ տոմս երկկողմանի, 5* բարձրակարգ հյուրանոցի կացություն, սնունդ AI, ապահովագրություն:
Ցանկության դեպքում հաղթողը կարող է գնել 1 լրացուցիչ ուղևորության փաթեթ, որը կներառի նշված ժամանակահատվածի համար՝ տոմս երկկողմանի, նույն հյուրանոցի կացություն, սնունդ AI, ապահովագրություն: Լրացուցիչ փաթեթների քանակը սահմանափակ է:
Ուղևորության կազմակերպումը կատարվում է գործընկերոջ կողմից, «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ չի կրում պատասխանատվություն ուղևորության կազմակերպման և ընթացքում առաջացած խնդիրների համար:

- Մրցանակի խաղարկությունը անցկացվելու է «Երկարացրու ամառը» պրոմոյի շրջանակներում գնված Honor 200 Lite հեռախոսի հետ տրամադրված SIM քարտի հեռախոսահամարի միջոցով:
- Մեկ անձնագրով հնարավոր է գնել առավելագույնը 3 հեռախոս և ակտիվացնել 3 SIM քարտ:
- Մրցանակի խաղարկությունն անցկացվելու է 7 անգամ՝ յուրաքանչյուր երեքշաբթի նախորդող ժամանակահատվածում «Երկարացրու ամառը» պրոմոյի շրջանակներում հեռախոսների գնորդների միջև:
- Վերջին խաղարկությունը տեղի կունենա 2024թ. հոկտեմբերի 4-ին:
- Եթե տեխնիկական պատճառներով խաղարկությունը չի կարող կայանալ նախատեսված օրը, ապա խաղարկությունը կարող է հետաձգվել մեկ այլ օր:
- Խաղարկության համար պատահական թվերի գեներատորը կընտրի շահող հեռախոսահամարներ բոլոր ներբեռնված հեռախոսահամարներից:
- Խաղարկության օրվա և տեղի մասին մասնակիցները կտեղեկացվեն ՍՄՍ հաղորդագրության միջոցով, ինչպես նաև տեղեկատվությունը հրապարակված կլինի www.telecomarmenia.am վեբ կայքում:
- Խաղարկությունը անցկացնելուց հետո, հաջորդ 3 օրվա ընթացքում հաղթողը կստանա ՍՄՍ, և զանգ, որից հետո 7 օրվա ընթացքում պետք է անձը հաստատող փաստաթղթով մոտենա «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի մասնաճյուղը և ստանա մրցանակը:
- Եթե վիճակախաղի անցկացման ժամկետներում կլինեն բաժանորդներ, ովքեր չեն պատասխանի հեռախոսազանգին /յուրաքանչյուր բաժանորդին կզանգեն 3 անգամ/, չեն ներկայանա «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի մասնաճյուղ նշված ժամանակահատվածում կամ կհրաժարվեն մրցանակից, ապա հոկտեմբերի 4-ին, 2024թ.-ին կանցկացվի 1 լրացուցիչ խաղարկություն բոլոր չհաղթած բաժանորդների միջև:
- Եթե վիճակախաղի մասնակիցը խաղարկության ընթացքում վերադարձնում է գնված հեռախոսը, ապա նա զրկվում է խաղարկությանը մասնակցելու իրավունքից, իսկ եթե շահել է՝ զրկվում է մրցանակից:
- Եթե վերջին խաղարկությունից հետո 04/10/2024թ. որևէ մեկը հրաժարվի մրցանակից, ապա շահումները հանվում են վիճակախաղից և լրացուցիչ խաղարկություն չի անցկացվելու:
- Շահողը կարող է փոխանցել մրցանակը միայն իր ընտանիքի անդամներին՝ ծնողներ, երեխաներ, կին/ամուսին, ինչի մասին մրցանակը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Կազմակերպչին: Մրցանակի փոխանցումն ընտանիքի անդամին հնարավոր է իրականացնել 1 անգամ, ու այդ փոխանցումը կլինի վերջնական և ենթակա չի լինի փոփոխման:

- Մրցանակը չեն կարող շահել աշխատակիցները, աշխատակիցների ընտանիքների անդամները և Գովազդային վիճակախաղը կազմակերպող և իրականացնող բոլոր անձինք:
- Լրացուցիչ ուղեգիր ձեռք բերելու ցանկության դեպքում, մրցանակը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում, շահողը պետք է տեղեկացնի Կազմակերպչին և հաջորդ 3 օրվա ընթացքում անձնական միջոցներով գնի այն, Կազմակերպչի կողմից նշված գործընկերոջից:

5.5.2. Մրցանակները չեն տրամադրվելու համարժեք դրամով:

5.6. Գովազդային վիճակախաղի մրցանակներ շահողների որոշման և մրցանակների տրամադրման կարգ՝

5.6.1. Սույն Կանոնների 5.5.1. կետում նշված մրցանակային ֆոնդի խաղարկությունը իրականացվում է պատահականության սկզբունքով Գովազդային վիճակախաղում բոլոր մասնակիցների միջև՝ Կազմակերպչի կողմից մշակված ծրագրային ապահովման միջոցով և սույն Կանոններին համաձայն:

5.6.2. Գովազդային վիճակախաղի մեկ մասնակից կարող է շահել մինչև 3 մրցանակ:

6. Մրցանակների ստացման կարգը, ժամկետներն ու վայրը

6.1. Մրցանակը ստանալու համար հաղթող մասնակիցը պետք է ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ:

6.1.1. Մրցանակների հանձնման վայրը՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ Վաճառքի և Սպասարկման կենտրոններ:

6.1.2. Հաղթողներին «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ –ի կողմից կուղարկվի SMS մրցանակը շահելու մասին, և կիրականացվի զանգ մրցանակը ստանալու օրը և տեղը համաձայնեցնելու վերաբերյալ:

6.1.3. Մրցանակների հանձնման օրը՝ հաղթողները կարող են ստանալ մրցանակները կազմակերպչի կողմից նախապես զանգ ստանալուց և ստացման օրը և Վաճառքի և Սպասարկման կենտրոնի հասցեն համաձայնեցնելուց հետո:

6.1.4. Եթե հաղթողը ՍՄՍ ստանալու պահից 7 օրվա ընթացքում չի գալիս Վաճառքի և Սպասարկման կենտրոն մրցանակը ստանալու համար, ապա նա զրկվում է մրցանակից:

6.1.5. Մրցանակների հանձնման/ստացման փաստը. մրցանակը համարվում է հանձնված/ստացված սույն Կանոնների կից թիվ 3 Հավելվածով սահմանված ձևը ստորագրման պահից:

7. Բողոքները և դրանց վավերականության ժամկետը

7.1. Գովազդային վիճակախաղի վերաբերյալ ցանկացած բողոք պետք է ուղղել «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ Զանգերի կենտրոն 100 հեռախոսահամարով կամ գրելով Ֆեյսբուքյան էջին այն ժամանակահատվածում, որին վերաբերում է բողոքը: Բողոքի գրանցման ամսաթիվ է համարվում Զանգերի կենտրոն կատարված զանգի/ ուղարկված նամակի ամսաթիվը:

7.2. Մասնակիցը պետք է մանրամասն ու մատչելի ներկայացնի բողոքի բովանդակությունը: Բողոքում պետք է նշված լինի մասնակցի անուն, ազգանուն, հայրանունը, կոնտակտային հեռախոսահամար և այն հեռախոսահամարը, որով բաժանորդը մասնակցել է Գովազդային վիճակախաղի, ինչպես նաև մասնակցի էլեկտրոնային հասցեն՝ նրա բողոքին պատասխանելու համար:

7.3. Բոլոր բողոքները կքննարկվեն՝ Կազմակերպչի կողմից դրանք ստանալու օրվանից սկսած 15 աշխատանքային օրվա ընթացքում:

7.4. Կազմակերպիչը դիտարկում է բողոքները՝ հիմնվելով սույն Կանոնների վրա:

7.5. Բողոքի առարկայի վերաբերյալ Կազմակերպչի որոշումը վերջնական է: Մասնակիցը Կազմակերպչի որոշման մասին կտեղեկացվի հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ այլ միջոցով:

7.6. Կազմակերպիչը, օգտագործելով իր տեխնիկական միջոցները, ապահովում է ծառայությունների և համակարգի մշտական աշխատանքը՝ պահելով այն բարձր մակարդակի վրա: Այդուհանդերձ, Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում այն խնդիրների համար, որոնք հնարավոր չէ վերացնել, չնայած որ դրա համար ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները: Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում հեռախոսային սարքավորումների աշխատանքի և երրորդ անձանց գործողությունների համար:

7.7. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Գովազդային վիճակախաղի մրցանակ շահած մասնակցի մեղքով մրցանակը ստանալու հնարավորության բացակայության համար, և նման դեպքերում Կազմակերպիչը մրցանակի հետ իր հայեցողությամբ վարվելու իրավունք է վերապահում:

7.8. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում այն իրավիճակների համար, երբ Գովազդային վիճակախաղի մասնակցության համար կատարվող գործողությունները կատարվում են սույն Կանոնների խախտմամբ:

7.9. Մասնակիցները հասկանում և համաձայնում են, որ սեփական ռիսկով են մասնակցում Գովազդային վիճակախաղի:

7.10. Կազմակերպիչը ոչ մի պատասխանատվություն չի կրում այն դեպքում, եթե մասնակիցը Գովազդային վիճակախաղի մասնակցելու և մրցանակը շահելու նպատակով խոշոր գումար ծախսելու ինքնուրույն որոշում կայացնի:

7.11. Կազմակերպիչը իրավունք է վերապահում Գովազդային վիճակախաղի անցկացման սույն Կանոններում փոփոխություններ կատարել՝ համապատասխան տեղեկատվություն հրապարակելով www.telecomarmenia.am կայքում: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

7.12. Բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ պետք է լուծվեն ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան: